



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(69), 2017

## ՏԱՆՁԵՆՈՒ ՖԻՏՈՖԱԳԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Յ.Լ.ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆ, Յ.Ռ.ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման  
և վերլուծության գիտական կենտրոն  
hlt\_arm@yahoo.com*

Բազմամյա դիտարկումներով պարզվել է, որ տանձենու պտուղները վնասում են համեմատաբար քիչ տեսակի վնասատուներ: Սակայն տերևները վնասող բուսակերների մեջ կան տեսակներ, որոնք լուրջ վնաս են հասցնում տանձենուն՝ զգալի ճնշվում է աճն ու զարգացումը, երբեմն տեղի է ունենում տնկարկների մասնակի կամ ամբողջական չորացում:

Մեր կողմից Արարատի մարզի տանձենու տնկարկներում արձանագրվել են վնասակար միջատների և տզերի 42 տեսակներ, որոնք պատկանում են կարգաբանական 2 դասի, 8 կարգի և 25 ընտանիքի: Տանձենու տնկարկներին առավել նշանակալից վնաս պատճառում է տանձենու սովորական տերևավիկը (*Psylla pyri* L.):

*Տանձենի – վնասակար տզեր և միջատներ – տեսակային կազմ*

Многолетними наблюдениями установлено, что плодам груши вредят сравнительно мало видов фитофагов. Однако среди листовых вредителей имеются виды, которые наносят серьезный вред этой культуре: сильно угнетается рост и развитие, иногда наблюдается частичное или полное высыхание.

По результатам проведенных исследований установлено, что в араратском марзе груше вредят 42 вида насекомых и клещей, которые принадлежат к двум классам, 8 отрядам и 25 семействам. Наиболее распространенным и вредоносным видом является обыкновенная грушевая листоблошка (*Psylla pyri* L.).

*Груша – вредные клещи и насекомые – видовой состав*

As a result of long years of observations, a conclusion was drawn that pear fruits are damaged by a relatively small number of phytophages. But among the leaf pests there are species that damage the pear trees more intensively: the growth and the development of the trees is considerably affected, and sometimes partial or complete drying of the plantations may occur.

42 types of pests have been identified in pear plantations in Ararat region, which belong to the 2<sup>nd</sup> taxonomic class, 8<sup>th</sup> order and 25<sup>th</sup> family.

Significance damage to pear plantations is caused by ordinary pear psylla (*Psylla pyri* L.):

*Pear – harmful mites and insects – species composition*

Հնդավոր պտղատեսակների մեջ տանձենին իր ժողովրդա-տնտեսական նշանակությամբ ինձորենուց հետո զբաղեցնում է երկրորդ տեղը:

Արարատյան հարթավայրի պայմաններում այս պտղատեսակին վնասում են բազմաթիվ վնասակար տզեր և միջատներ: Հայտնաբերված ֆիտոֆագերի մեջ կան տեսակներ, որոնց հասցրած վնասի հետևանքով կտրուկ ընկնում է ծառերի բերքատվությունը, իսկ ստացված բերքը լինում է անորակ: Հետազոտության նպատակն է եղել ՀՀ Արարատի մար-

զի պայմաններում ուսումնասիրել տանձենու վնասատուների տեսակային կազմը և տալ դրանց կարգաբանական բնութագրերը, ինչպես նաև պարզաբանել վնասատուների դասակարգումը ըստ սննդային մասնագիտացման:

**Նյութ և մեթոդ:** Տանձենու վնասատուների տեսակային կազմը պարզաբանելու նպատակով 2012 - 2015 թթ. վեգետացիայի ընթացքում Արարատի մարզի տարբեր համայնքների տանձենու տնկարկներում կատարվել են հետազոտություններ, որի ընթացքում ուշադիր զննվել է ծառերի ողջ սաղարթը, արձանագրվել և հավաքվել են հայտնաբերված բոլոր ֆիտոֆագերը (մորֆոլոգիական զարգացման տարբեր փուլերում) և արձանագրվել է դրանց վնաս հասցնող փուլը: Լաբորատորիայում դրանք պահվել են մինչև հասուն դառնալը, այնուհետև ֆիքսվել միջատաբանությունում ընդունված մեթոդների համաձայն (70<sup>0</sup> սպիրտ-գլիցերինային լուծույթում կամ բամբակյա բարձիկների վրա), պիտակավորվել են հետագայում տեսակային պատկանելիությունը ճշտելու նպատակով:

Տարբեր ֆերմերային տնտեսություններում երթուղային հետազոտությունները վեգետացիայի ընթացքում կատարվել են պարբերաբար՝ 20 օրը մեկ, իսկ մշտական (ստացիոնար) հետազոտությունների և դիտումների վայրում (Մրգավան) ավելի հաճախ՝ շաբաթը մի քանի անգամ:

Հավաքված վնասատուների տեսակային պատկանելիությունը որոշվել է մասնագիտական որոշիչների օգնությամբ [3-5] և նույնականացվել «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների օժանդակությամբ:


**Արդյունքներ և քննարկում:** Արարատի մարզի տարբեր տնտեսությունների տանձենու տնկարկներին վնասող ֆիտոֆագերից մեր կողմից արձանագրվել են հետևյալ 42 տեսակները.

1. *Bryobia redikorzevi* Reck. – Պտղատուների գորշ տիզ
2. *Tetranychus telarius* L. – Սովորական ոստայնատիզ
3. *Panonychus ulmi* Koch. – Պտղատուների կարմիր տիզ
4. *Epirimerus pyri* Nal. – Տանձենու քառոտ տիզ
5. *Taeniothrips inconsequens* Uz. – Տանձենու թրիպս
6. *Typhlocyba prunicola* E. – Տանձենու թզուկ ցիկադ
7. *Psylla pyri* L. – Տանձենու սովորական տերևավիկ
8. *Psylla pyrisuga* Frst – Տանձենու մեծ տերևավիկ
9. *Psylla vasiljevi* S. – Տանձենու դեղնագորշ տերևավիկ
10. *Anuraphis pyrilarisi* S. – Տանձենու-հովանոցազգու կանաչ լվիճ
11. *Dysaphis mala* Nevs. – Տանձենու հարավային լվիճ
12. *Dysaphis reaumuri* M. – Տանձենու տերևաղոր լվիճ
13. *Aphis pomi* Deg. – Խնձորենու կանաչ լվիճ
14. *Anuraphis farfarae* Koch. – Տատրակի լվիճ
15. *Pseudococcus comstocki* Kuw. – Կոմստոկի որդան
16. *Parthenolecanium corni* Bouché. – Ակացիայի կեղծ վահանակիր
17. *Lepidosaphes malicola* Borchs. – Հայկական ստորակետանման վահանակիր
18. *Stephanitis pyri* F. – Տանձենու ժանեկամլուկ
19. *Palomena prasina* L. – Ծառի կանաչ վահանամլուկ
20. *Byctiscus betulae* L. – Տանձենու կամ խաղողի փողոլոր
21. *Coenorhinus pauxillus* Germ. – Բուկարկա
22. *Rhynchites giganteus* Kryn. – Տանձենու մեծ երկարակնճիթ
23. *Anthonomus piri* Boh. – Տանձենու ծաղկակեր
24. *Capnodis tenebrionis* L. – Սև ոսկերգեզ
25. *Neurotoma flaviventris* Retz. – Տանձենու ջուլիակ-սղոցող
26. *Hoplocampa brevis* Klug. – Տանձենու սղոցող
27. *Caltria cerasi* L. – Բալենու լորձնոտ սղոցող
28. *Contarinia pyrivora* Riley. – Տանձենու պտուղների գալամլակ
29. *Dasyneura piri* Bouche. – Տանձենու տերևային գալամլակ
30. *Archips crataegana* Hb. – Ալոճենու տերևղոր
31. *Pandemis chondrillana* HS. – Կանաչ տերևղոր
32. *Archips (Cacoecia) rosana* L. – Վարդենու տերևղոր
33. *Laspeyresia pomonella* L. – Խնձորենու պտղակեր
34. *Laspeyresia pyrivora* Dan. – Տանձենու պտղակեր
35. *Recurvaria nanella* Hb. – Ռեկուրվարիա
36. *Aporia crataegi* L. – Ալոճաթիթեռ

- 37. *Lycia (Biston) hirtaria* Cl. – Գորշգծավոր երկրաչափ-մետաքսագործ
- 38. *Malacosoma neustria* L. – Օղակավոր մետաքսագործ
- 39. *Lymantria dispar* L. – Տարազույգ մետաքսագործ
- 40. *Euproctis chrysorrhoea* L. – Ոսկետուտ
- 41. *Cosmia (Calymnia) trapezina* L. – Բազմակեր բվիկ
- 42. *Ocnogyna loewii* var. *Armena* Stgr. – Օկնոզինա

Ստորև ներկայացնում ենք արձանագրված ֆիտոֆագերի կարգաբանական բնութագրերը:

Ինչպես երևում է նկար 1-ից, վնասատուներից չորս տեսակը (9,5 %) պատկանում են Սարդակերպերի (Arachnoidea), իսկ երեսունութը (90,5 %)՝ միջատների (Insecta) դասին:




Նկ. 1. Ֆիտոֆագերի դասային պատկանելիությունը

Նկ. 2-ի վերլուծությունից պարզվում է, որ տանձենիների վրա արձանագրված վնասատուները պատկանում են տաքսոնոմիական 8 կարգերի, ընդ որում առավել ներկայացուցչական են թեփուկաթևների (Lepidoptera) և միակերպաթևների (Homoptera) կարգերը, որտեղ առկա են ֆիտոֆագերի համապատասխանաբար 13 և 12 տեսակներ (կամ արձանագրված վնասատուների 31 և 28,5%-ը):


Ընդամենը մեկ տեսակով կամ արձանագրված ֆիտոֆագերի 2,4 %-ով է ներկայացված Թրիպսների (Thysanoptera) կարգը:

Հետազոտություններից պարզվել է նաև, որ հայտնաբերված վնասակար տեսակները պատկանում են կարգաբանական 25 ընտանիքների:



Նկ. 2. Ֆիտոֆագերի կարգային պատկանելիությունը

Նկ. 3-ում ներկայացված է տանձենու վնասատուների դասակարգումը ըստ սննդային մասնագիտացման: Համաձայն ներկայացվող տվյալների, առավել շատ են պոլիֆագերը (27 տեսակ), որոնք կազմում են արձանագրվածների 64 %-ը: Օլիգոֆագերը (7 տեսակ) և մոնոֆագերը (8 տեսակ) կազմել են համապատասխանաբար 17 և 19 %:



Նկ. 3. Վնասատուների դասակարգումը ըստ սննդային մասնագիտացման

Ըստ բազմամյա դիտարկումների, տանձենու վրա արձանագրված 42 տեսակ վնասատուներից առավել նշանակալից վնաս հասցնում է տանձենու սովորական տերևալվիկը (*Psylla pyri* L.) [1-2]:

Այսպիսով, կատարված հետազոտությունների արդյունքում Արարատյան հարթավայրի տանձենու տնկարկներում արձանագրվել են վնասակար տզերի և միջատների 42 տեսակներ, որոնք պատկանում են կարգաբանական 2 դասի, 8 կարգի և 25 ընտանիքի:

Տանձենու տնկարկներին առավել նշանակալից վնաս պատճառում է տանձենու սովորական տերևալվիկը (*Psylla pyri* L.):

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թերլեմեզյան Հ.Լ., Հարությունյան Գ.Ո. Նորագույն միջատասպանների փորձարկման արդյունքները տանձենու սովորական տերևալվիկի (*Psylla pyri* L.) դեմ Արարատյան հարթավայրի պայմաններում: Ագրոգիտություն (գիտական ամսագիր), № 3-4: Էջ 186-187, Երևան, 2013:
2. Հարությունյան Գ.Ո. Պատրաստուկների կենսաբանական և տնտեսական արդյունավետությունը տանձենու տերևալվիկի (*Cacopsylla pyri* L.) դեմ: Ագրոգիտություն (գիտական ամսագիր): Երևան, 7-8, Էջ 229-232, 2016:
3. Бондаренко Н.В., Пегельман С.Г., Тамтар А.В. Практикум по вредным нематодам, клещам, грызунам. Ленинград, Колос. 208 с., 1980.
4. Определитель вредных и полезных насекомых и клещей плодовых и ягодных культур в СССР. Л., Колос. 288 с., 1984.
5. Определитель насекомых Европейской части СССР (в 5 томах). Наука, Л., 1969.

Ստացվել է 07.07.2016